ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

ՀՀ ԳՈՐԻՍ ԽՈՇՈՐԱՑՎԱԾ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆ ԵՎ ԿԱՐԻԵՐԻԱՅԻ ՈՒՂՂՈՐԴՄԱՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՍՏԵՂԾՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ք. Գորիս 28□ 12□ 2018թ.

Գորիս համայնքի ղեկավար Առուշ Առուշանյանը և «Գործընկերություն և ուսուցում» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ ԳՈՒՄ ՀԿ) գործադիր տնօրեն Արտաշես Տոռոզյանը (այսուհետև Կողմերը) համաձայնության են գալիս Գորիս խոշորացված համայնքում Սոցիալական գործընկերության զարգացման շուրջ՝ նպաստելով համայնքում մասնագիտական կողմնորոշման և կարիերիայի ուղղորդման համայնքային կենտրոնի (այսուհետև՝ համայնքային կենտրոն) ստեղծմանն ու զարգացմանը:

ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

- *Նպաստել Գորիս համայնքի շահագրգիռ կողմերի միջև (բիզնես կառույցներ, կրթական հաստատություններ, ՏԻՄ, ՔՀԿ, Զբաղվածության տարածքային կենտրոն) սոցիալական գործընկերության ձևավորմանը,*
- *Նպաստել համայնքում մասնագիտական կողմնորոշման և կարիերիայի խորհրդատվական համակարգի արդյունավետության զարգացմանը, զբաղվածության մակարդակի բարձրացմանը, նորարարության և ձեռներեցության խթանմանը,*
- *Նպաստել Գորիս համայնքում մասնագիտական կրթության և ուսուցման (ՄԿՈՒ) առաջարկի և աշխատաշուկայի (ԱՇ) պահանջարկի համապատասխանության բարելավմանը:*

2□ ԿՈՂՄԵՐԻ ՀԱՆՁՆԱՌՈՒԹՅՈՒՆԵՐԸ

Գորիսի համայնքապետարանը պատրաստակամ է՝

- Աջակցել Սոցիալական գործընկերության համայնքային խորհրդի/այսուհետ՝ համայնքային խորհուրդ/ ձևավորմանը,
- Տրամադրել բարեկարգ տարածք համայնքային կենտրոնի գործունեության կազմակերպման համար
- Համագործակցել համայնքային խորհրդի հետ համայնքային կենտրոնի երկարաժամկետ ռազմավարության մշակման, ծրագրերի պատրաստման և իրականացման գործընթացներում
- Համայնքային բյուջեից տրամադրել ֆինանսական միջոցներ 2019թ-ին համայնքային կենտրոնի աշխատանքներն արդյունավետ կազմակերպելու համար
- Նպաստել համայնքային կենտրոնի հեղինակության բարձրացմանը տեղական և ազգային մակարդակներում:

ԳՈՒՄ ՀԿ-ն պատրաստակամ է՝

- Տրամադրել գույք և սարքավորումներ համայնքային կենտրոնի աշխատանքների կազմակեպման համար,
- Զարգացնել համայնքային կենտրոնի անդամների կարողությունները,
- Ստեղծել Գորիս համայնքում աշխատանք փնտրողների էլէկտրոնային բազա՝ ըստ մասնագիտությունների և կարողությունների,
- Ստեղծել կադրային բանկ,
- Քարտեզագրել համայնքում առկա աշխատատեղերը
- Ստեղծել առցանց հարթակ, որտեղ հասանելի կլինեն համայնքում առկա աշխատատեղերը,
- Աշխատանք փնտրողների համար ստեղծել այլընտրանքային կրթության հնարավորություն(օտար լեզուների, համակարգչային հմտությունների և այլ ուղղությամբ վերապատրաստումների կազմակերպում)
- Աշխատաշուկայի կարիքներից ելնելով՝ աշխատանք փնտրողներին դարձնել մրցունակ վերապատրաստումների և կարողությունների զարգացման միջոցով,
- Անհրաժեշտության դեպքում կազմակերպել հարցազրույցներ և, գործատուների պահանջներից ելնելով, կատարել աշխատողների ընտրություն,
- Տրամադրել անհրաժեշտ խորհրդատվություն համայնքային կենտրոնի գործունեության արդյունավետության բարձրացման համար,
- Ապահովել համայնքային կենտրոնի գործունեությունը,
- Ձևավորել համայնքային կենտրոնի արդյունավետ համագործակցությունը տեղական և միջազգային շահագրգիռ կառույցների հետ,
- Տրամադրել խորհրդատվական ծառայություններ (դասընթացներ, խորհրդատվություններ, քոչինգ) Գորիսի համայնքապետարանին:

Կողմերը կարող են նաև՝

- ✓ Համատեղ իրականացնել Կողմերի ներկայացուցիչների ներքին հաղորդակցման զարգացմանն ուղղված հանդիպումներ,
- ✓ Համատեղ իրականացնել հանրային իրազեկման միջոցառումներ, այդ թվում՝ զանգվածային լրատվամիջոցներով, ուսումնասիրություններ և հետազոտություններ,
- ✓ Համագործակցել փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող այլ միջոցառումների շրջանակներում:

3. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Կողմերը պարտավոր են առաջնորդվել համագործակցության հետևյալ հիմնական սկզբունքներով՝

- ✓ փոխադարձ վստահություն,
- ✓ պատասխանատվություն,
- ✓ փոխըմբռնում և փոխզիջում,
- ✓ թափանցիկություն:

4. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

4.1 Հուշագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է անժամկետ:

4.2 Սույն Հուշագրի ցանկացած փոփոխություն կատարվում է գրավոր և դառնում նրա անբաժանելի մասը:

4.3 Հուշագիրը կարող է դադարեցվել Կողմերից յուրաքանչյուրի նախաձեռնությամբ, մյուս Կողմին առնվազն 30 օր առաջ գրավոր տեղեկացնելու պայմանով:

4.4 Սույն Հուշագրի վերաբերյալ Կողմերի միջև ծագած անհամաձայնություններն ու վեճերը լուծվում են Կողմերի բանակցությունների միջոցով:

4.5 Սույն Հուշագիրը կնքվում է երկու բնօրինակից, հայերեն լեզվով, յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

5. ԿՈՂՄԵՐԻ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Գորիս համայնք Համայնքի ղեկավար՝ Ա.Առուշանյան Կ.Տ.	«Գործընկերություն և ուսուցում»/ԳՈՒՄ հասարակական կազմակերպություն Տնօրեն՝ Ա.Տոռոզյան Կ.Տ.